մասնակցող անձը, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գործի քննության հետ կապված փաստաբանի խելամիտ վարձատրության ծախսեր են համարվում նաև փաստաբանական կազմակերպություններին վճարված կամ վճարման ենթակա գումարները, նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ այն դեպքում, երբ հանրային պաշտպանի գրասենյակը գործին մասնակցող անձին տրամադրել է անվճար իրավաբանական օգնություն, և դատական ակտը կայացվել է այդ անձի օգտին, ապա սույն հոդվածով նախատեսված ծախսերը սույն օրենսգրքով սահմանված կարգով ողջամիտ չափով բռնագանձվում են Հայաստանի Հանրապետության պետական բյուջե՝ գործին մասնակցող այն անձից, որի վրա դրվել է դատական ծախսերի հատուցման պարտականությունը, իսկ նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ սույն հոդվածով նախատեսված ծախսերի փոխհատուցման չափը որոշելիս դատարանը հիմք է ընդունում ծախսերի ողջամիտ չափը, որը որոշվում է՝ ելնելով փաստաբանի կատարած աշխատանքի ծավալից, գործի բարդությունից, Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի կողմից սահմանված փաստաբանական գործունեության վճարների միջին գնացուցակից, ինչպես նաև դատական ակտով բռնագանձման ենթակա գումարի և պահանջվող փաստաբանական վճարի չափերի հարաբերակցությունից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 108-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գործին մասնակցող անձանց կրած, ինչպես նաև վճարման ենթակա դատական ծախսերի փոխհատուցման հարցը լուծելիս դատարանը հիմք է ընդունում միայն գործում առկա փաստաթղթերով հիմնավորված ծախսերը:

Տվյալ պարագայում հիմք ընդունելով, որ սույն քաղաքացիական գործում առկա է թիվ 25.06.2024թ.-ի թիվ B 6755126068 հաշիվ- վավերագիրը, հայցվորի ներկայացուցիչը կազմել է միայն հայցադիմում և դիրքորոշում, դատական նիստերին չի ներկայացել որպիսի հանգամանքների հաշվառմամբ, Դատարանը՝ սույն գործով փաստաբանական ծառայություններ մատուցելու դիմաց վճարման ենթակա գումարի ողջամիտ չափ է համարում 50.000 ՀՀ դրամ գումարը և գտնում է, որ այն Պատասխանողից պետք է բռնագանձել հօգուտ հայցվորի: Դատարանը նման եզրակացության է հանգում՝ գնահատելով սույն գործով հայցվորի ներկայացուցչի կատարած աշխատանքի ծավալը՝ ապացույցներ հավաքելու և դատարան ներկայացնելու, փաստաբանի փաստացի կատարած այլ գործողությունների հանգամանքը, գործի քննությանը մասնակցության աստիճանը, գործի բարդությունը, գործի քննության տևողականությունը, ՀՀ դատական պրակտիկայում առկա՝ փաստաբանի կատարած ծախսերի իրական, ողջամիտ լինելու չափորոշիչները, մնացյալ մասով Դատարանը գտնում է, որ պահանջը ենթակա է մերժման:

<u>Եզրափակիչ մաս.</u>

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 188-189, 191-192, 198 հոդվածների պահանջներով, դատարանը՝

Վճռեց

«ՀԱՋԱՐԱՇԵՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հայցն ընդդեմ պատասխանող՝ ՀՀ Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի՝ ՀՀ Կոտայքի մարզ Ծաղկաձոր համայնքի ղեկավար Նարեկ Հարությունյանի 25.04.2024թ.-ի թիվ 501 որոշումը՝ Հազարաշեն ՄՊԸ-ին երկու տարի ժամկետով գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասով անվավեր ճանաչելու պահանջի մասին, բավարարել մասնակի.

Անվավեր ճանաչել ՀՀ Կոտայքի մարզ Ծաղկաձոր համայնքի ղեկավար Նարեկ Հարությունյանի 25.04.2024թ.-ի թիվ 501 որոշումը՝ Հազարաշեն ՍՊԸ-ին երկու տարի ժամկետով գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին:

ՀՀ Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքից հօգուտ հայցվոր «ՀԱԶԱՐԱՇԵՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության բռնագանձել 50.000 ՀՀ դրամ, որպես պետական տուրքի գումար, 50.000 ՀՀ դրամ, որպես փաստաբանի խելամիտ վարձատրության գումար մնացած մասով փաստաբանի խելամիտ վարձատրության վերաբերյալ պահանջը մերժել:

Դատական ծախսերի հարցը համարել լուծված:

Վճիռը կամովին չկատարելու դեպքում կկատարվի Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության միջոցով:

Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է բողոքարկվել Հայաստանի Հանրապետության վերաքննիչ քաղաքացիական դատարանին՝ հրապարակման պահից մեկ ամսվա ընթացքում:

Դատավոր՝ **Էդուարդ Ամալյան**

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am